# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# Վ Ա Յ Ո Ց Ձ Ո Ր Ի
# Մ Ա Ր Զ Պ Ե Տ

**ք. Եղեգնաձոր, Շահումյան 5** **Հեռ. (+374281) 2 25 22**

**,, _____,, ,,________,, 2021թ** **N ___________**

**ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ**
**ՆԱԽԱԳԱՀ ՏԻԿԻՆ Շ. ԴՈՅԴՈՅԱՆԻՆ**

**Հարգելի՛ տիկին Դոյդոյան**

Ի պատասխան Ձեր առցանց հարցման, տեղեկացնում եմ.

1. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի քարտուղարության ընդհանուր բաժնում հարցումների վիճակագրությունը վարվում է քաղաքացիների ընդհանուր վիճակագրության մեջ:
2. Հարցումների առանձին վիճակագրության պարտականությունը կրում է մարզպետարանի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը:
3. Հարցումների պատասխաններն առաքելուց հետո, մարզպետարանի քարտուղարության ընդհանուր բաժնի կողմից տեղեկացումով գրությունները հասցեագրվում են տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնին, մարզպետարանի պաշտոնական կայքէջում տեղադրելու և հաշվառում իրականացնելու համար:
4. Հարցումների վիճակագրությունը հրապարակվում է մարզպետարանի պաշտոնական կայքէջի «Դիմեք մեզ և տեղեկատվության ազատություն» բաժնի «Հարցումների վիճակագրություն» ենթաբաժնում՝ http://vdzor.mtad.am/Harcumneriv2/ :
5. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմում տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձ է նշանակվել մարզպետարանի ՏՀԿ բաժնի պետ Սոնա Մարգարյանը:

6. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմում տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձը նշանակվել է ՀՀ Վայոց ձորի մարզպետի 29.01.2010 թվականի թիվ 2 որոշման 3-րդ կետով: Որոշումը տեղադրված է պաշտոնական կայքէջի http://vdzor.mtad.am/u_files/file/vdzor/marzpetaran/Scan%2012.PDF հասցեում:
7. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմում տեղեկատվության ազատության համար պատասխանատու պաշտոնատար անձը մասնակցել է ԻԱԿ-ի կողմից ՀՀ մարզպետարանների աշխատակիցների համար կազմակերպված առկա և առցանց բոլոր դասընթացներին և քաղծառայողների համար կազմակերպված վերապատրաստումներին:

1/3/2022

X 

ԱՐԱՐԱՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

**Հարգանքով՝** Подписано: GRIGORYAN ARARAT 1310850550 **Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ**

Կատարող՝ Ս Մարգարյան
Տեղեկատվության և հասարակայնության
հետ կապերի բաժին
Հեռ 0281 2 40 03